№ 224 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 1905 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11 № 224

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՖՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում պրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողանեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Ալէքսանդր Սաեփանեան Անանեանը իր որդիներանցով և հարսով կաւօք սրտի յայտնում է բարեկամներին և ազգականներին իր ամուսնին

ՈՍՕՋԱԼԻՄ ԴԱՒԹԵԱՆ ԱՆԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը կատարվելու է շաբաթ երեկոյեան ժամի 7-ին Գօլովինսկի, № 22 (տուն Միրզոյեանի), իսկ յուղարկաւորութիւնը լինելու է կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան ժամի 10-ին, գէպի Զրվինեանց ս. Կարապետ եկեղեցին, իսկ այնտեղից Վերայի հանգստարանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոյն հարցի մասին. Վերջին տեղեկութիւններ. **Տեղեկութիւններ գաւառից.** — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանոնները. Ընթերցողի օրագիրը. Մի փոքրիկ կօմեդիա. Հաշուետիւնը Զանդեզուրում. Նամակ Աբխազիայից. Ներքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Թիւրք նահանգապետը։

ՆՈՑՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Երէկիայ մեր յօդուածում ընդհատուրիւեան մասին մենք առաջ բերինք հայ պատգամաւորութեան ձևակերպութիւնը։ Այժմ ծանօթացնենք մեր ընթերցողին այն ձևակերպութեան հետ, որ մշակել է ս ա հ մ ա ն ա դ ր ա կ ա ն - ա ա մ կ ա վ ա ր ա կ ա ն կոնստիտուցիան։

Ահա այդ ձևակերպութիւնը։

«Եթէ կը հաստատվին քաղաքական ազատութեան իրաւունքներ և կանոնաւոր ներկայացուցչութիւն սահմանադրական իրաւունքներով, ռուսական ամբողջ պետութեան համար պէտք է քաց անվի ընդհանուր պետական օրէնսդրութեան կարգով իրաւական ճանապարհ հաստատելը տեղական ավտոնօմիա (ինքնավարութիւն) և համերկրային ներկայացուցչական ժողովները, որոնք իրաւունք չունենան մասնակցելու օրէնսդրական իշխանութեան գործադրութեան մէջ որոշ առարկաների վերաբերմամբ, համապատասխան ապդարձակութեան պահանջին»։

Ինչպէս տեսնում-էք՝ այդ ձևակերպութիւնը չափազանց սղմված լինելու պատճառով, փոքր ինչ մութ է։ Աշխատենք նրան վերլուծութեան ենթարկել և պարզել։

Այդտեղ տեղական կազմակերպութիւնների համար երկու ձև է առաջարկված։ Նրանցից մէկը անուանված է տեղական ավտոնօմիա կամ ինքնավարութիւն, միւսը համերկրային ներկայացուցչական ժողով։ Ուրեմն եթէ խօսքը գալու լինի Անդրկովկասին, նա կարող կը լինի կոչվել Անդրկովկասեան տեղական ավտոնօմիա, կամ Անդրկովկասեան ներկայացուցչական ժողով։

Դա ուրեմն մի համերկրային պատգամաւորական ժողով կը լինի, որ կը գումարվի կենտրօնական կէտում, այսինքն Թիֆլիսում։

Ի՞նչ իրաւական առանձնաշնորհում-ներով։

Ուրեմն ամբողջ պետական օրէնսդրութիւնը լինելով հանրային ամբողջ պետութեան համար, կը թողնէ մի որոշ տարածութիւն տեղական օրէնսդրական գործունէութեան համար։

Անկասկած՝ նախատեսված որոշ շրջանակներում։

Պետական ընդհանուր օրէնսդրութիւնը և տեղական որոշ սահմաններում կատարվող օրէնսդրական գործողութիւնները միմեանց պէտք է լրացնեն և ընդհանուր ներդաշնակութիւն առաջացնեն։

Պէտք է նկատենք, որ «համերկրային» բառը գործածելով, մենք ազատ թարգմանութիւն ենք արել։ Մենք նրան գործածենք ածել «օբլաստ» բառի տեղ։ Օբլաստ շատ անգամ թարգմանվում է նահանգ, նա կարող էր և շրջան թարգմանվել։ Մենք ներկայ դէպքում գործածեցինք «համերկրային» բառը, որովհետև նրանով պէտք է որոշենք մի ամբողջ երկրի կամ շրջանի վերաբերեալ կազմակերպութիւն, օրինակ, Անդրկովկասի, Սիբիրի, Մալօրօսիայի և այլն։ Ամենայն հեշտութեամբ կարելի էր գործածել և շրջանային, կամ հանրաշրջանային բառերը։ Մեր միտքն էր արտայայտել աւելի որոշ կերպով նրա մէջ պարունակված բովանդակութիւնը։

Եթէ համեմատենք սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան ձևակերպութիւնը այն ձևակերպութեան հետ, որ մշակել էր հայկական պատգամաւորութիւնը, մենք կը նկատենք նրանց մէջ մի յայտնի աստիճան նմանութիւն։ Իսկ ինչ բանի մէջ է տարբերութիւնը։

Սահմանադրական-ռամկավարական ծրագիրը խօսում է ընդհանուր քաղաքական կազմակերպութեան մասին և ուրեմն աւելի ընդարձակ բովանդակութիւն ունի, իսկ հայկական պատգամաւորութեան ձևակերպութիւնը գուցէ ունի նոյն իմաստը, բայց գործածելով «տեղական» բառը, տեղիք է տալիս ասելու, որ համերկրային տեսակային ինքնավարութիւնը միայն այն ժամանակ կը տարածվի էր իսկական նշանակութիւնը, երբ Պետական Դուման կը տայ տեսակային ինքնավարական իրաւունքներ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կովկասի Փոխարքան առաջել է հեռաւեալ հեռագիրը Գանձակի ժամանակաւոր դէներալ-նահանգապետ Տատիշչիվիլուց. «Զեկուցանում եմ ձեր պայծառափայլութեան, որ, Շուշի հասնելով, ես զբաղվեցի Մատուսեանի անյայտանալու գործով և իմ բացակայութեան ժամանակ այտեղ լսրված յարաբերութիւնները կանոնաւորելով։ Գործերի դրութիւնը հետևեալն է. խռովութիւնները սկսված վայրերի վերջին շրջագայութիւնն սկսեցի Գանձակի և Ջիվանշիրի գաւառներից դէպի Ազդամ, Շուշի, Գօրիս, Ջիբրայիլ, Վանք, Զարաբուլաղ և Շուշի։ Հետևելով իմ ծրագրին, առանձին ապդեցիկ անհատների և համայնքների դիմելով, կարող եղայ հետևաբար ներշնչել դէպի իշխանութիւնները և դրա հետ միասին՝ հայերից և մահմեդականներից ընտրված պատգամաւորների միջոցով հասայ այն բանին, որ երկու ազգութիւնները համոզվեցին, որ այլ ևս չէ կարելի շարունակել ապրել նախկին պայմաններում, որովհետև ամբողջ ազգաբնակութիւնը ծարաւ է խաղաղութեան և պատրաստ է դրիւթեայ ընդունել կառավարութեան ձեռք առած միջոցները։ Միանգամայն խաղաղութեան վերահաստատմանը խանգարում է նախնական քննութեան դանդաղ կատարումը՝ բաւարար թուով քննիչների բացակայութեան պատճառով։ Այդ պատճառով յանցաւորներից շատերը դեռ ևս ձերբակալված են անպատիժ. վարչական կարգով և էկզեկուցիաներով, որ բացառիկ դէպքերում շարունակվում էին ամենաշատը մի շաբաթ, ազդուեցի ամրողջ հասարակութեան դալ իրար բաւարարութիւն պատճառելու համար կողոպտուածների և տուժարների քշել-տանել դէպքերի ապիթով, պահանջների և գումարների որոշումը ենթարկելով երկու կողմերի ներկայացուցիչներից բաղկացած յանձնաժողովներին տալն մի գաւառում, հաշտարար միջնորդների նախապահութեան տակ։ Մինչև որ յանցաւորները դատական ճանապարհով չը դատվին ու չը մեղադրվին, անյարմար եմ համարում իմ իշխանութիւնով պահպանել յարձակման և կողոպտութեան յանցաւորների վրա։ Աքսորի ենթակայ անձերին, որոնց չէ կարելի դատական պատասխանատուութեան ենթարկել, իմ միտքս վերջացնելուցս յետոյ, կը ներկայացնեմ Բարձրագոյն մանիֆէստի ողորմութեանը։

Վերջնականապէս հանդարտեցրի հայկական ծայրայեղ կուսակցութիւնը (?!)։ Նրա յետագայ գործունէութիւնը չէ կարող խախտել նահանգի խաղաղութիւնը ապագային հողի վրա (?!)։ Այժմ ձեռնարկում եմ մի քանի անձերի աւտանձին յանցանքները ջնջելու, որոնք առանձնապէս ազդում են երկու կողմի ժողովուրդներին էլ։ Ելախ-Շուշի դիծը պահպանված է կազակների պահակներով. տարվող ապրանքների և ճամբորդների հետ դրվում են դինուորներ. կենսական մթերքներ բերելու ճանապարհներին դրված են կարակներ»։

Կասկած չը կայ, հիանալի են այդ հեռագրում յիշված միջոցները. դրանք կարող են դրական դործնել մի երկիր. բայց ուր է այդ դրախտը—գոնէ մեր երկրում նա չը կայ։ Այդ դրախտի փոխարէն մենք մի բան ենք միայն լսում. բոլոր վարչական ու էկզեկուցիայի միջոցները ծառայում են միայն հայերի դէմ, քանդում են միայն նրանց տները, իսկ թուրքերին ոչ մի ձեռս... Դեռ մինչև այժմ էլ հայերի ձեռքից խլում են այն զէնքը, որ ծառայում է մի այն անձնապաշտպանութեան, իսկ անթիւ ու անհամար թուրք խուլիգանական ու աւազակ տարրերից չեն խլում այն զէնքերը, որոնց միակ նպատակն է աւազակութիւնը, կողոպուտը և մարդասպանութիւնը։ Գեն. Տատիշչիվիլին նախադասում է Գանձակի գաւառը իբր մի Եդեմական դրախտ, այն ինչ իրապէս նա մի դժոխք է։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Զիպդամլու, նոյեմբերի 2-ին։ Անցեալ հոկտեմբեր ամսվայ սկզբներին, լեռներից վար իջնող քրդերը, միացած Վեդիի դաշտի թուրք խուժանի հետ, արշաւանք են դործում մահմեդական պիւտիով շրջապատված Ռեհանլու հայաբնակ դիւղի վրա։ Մի քանի հայերի յուսահատ ազատակի օգնութեան հիչը հասնում է Թաւլուի կօմանդիրին, և ահա արդարութիւնը իր դերի մէջ է մտնում։ Վերջինը իր պահակների դլուխն անցած, հասնում է Ռեհանլու, և երկու ժամի չափ կատաղած խուժանի հետ կռւելուց յետոյ՝ մահմեդականների գազանացած կրքերը Ջարդ ու փշուր է անում։ Այդ դէպքը շատ դեղեցիկ խրատական եղաւ թէ Վեդիի դաշտեցի մահմեդականների և թէ հարևան շրջանի թուրքերի համար։ Այսպէս, ահա մի անգամ չարութիւնը արդարացի պատժվելուց յետոյ, անմիջ արիւնը առժամանակ դադարից հանելուց։ Եւ գործ-

բիւրեղ մասնաւորը հայ-թրքական ընդհարումները ու անհատական սպանութիւնները։

Բայց Ռուսաստանի ընդհանուր գործադուլը և ներքին խռովութիւնը կրկնակի ուժ և նոր եռանդ ներշնչեցին մահմեդականների վայրենի կրքերին. կրկին սկսեց անմեղ արիւնը հոսել։ Այս անդամին հայկական արիւնը հոսեց Գեղարդայ վանքի մօտերում գտնվող Բաշ-Գառնի և Գողթ լեռնային հայ գիւղերում։ Գատմաբը. Բաշ-Գառնիին մօտիկ ս. Ստեփաննոս վանքի (որի վանահօրը՝ Ներսէս վարդապետին սպանեցին Թուրքերը 1893 թ. սեպտեմբերի 10-ին) հողերը կառավարութիւնը վերադարձնելուց յետոյ, վանահօր կարդադրութեամբ, բաշգառնեցի և գողթեցի հայերը գնում են կիսու վարում և ցանում են ցորեն։ Կանաչը բարձրանում է, ապա Նաւասարդի և Յովհաննաւորի Թուրքերը գնում են, կանաչ ցորենը վարում և նորից իրանք ցանում ու մահմեդականները հայերին կուի հրաւիրում։ Հետևանքը այն է լինում, որ հոկտեմբերի 23-ին շրջակայի Արթոյ, Բայբուրդ, Ալմարդան, Թարաքամալար, Նալիճա և Զանգասարու գիւղերի մահմեդականները միացած մեծ ուժով յարձակվում են Գողթի վրա։ Սրբանք Թողում են ամեն ինչ և փախչում պաշտպանութիւն գտնում Բաշ-Գառնիում։ Միւս օրը վերջին գիւղն էլ ենթարկվում է յարձակման, սկսվում է գիւղի պաշարումը. ահա այստեղ ընկնում են Սմբատ, Միսակ և ուրիշ քաջարի երիտասարդներ։

Միսակ Բաշ-Գառնի հայ գիւղը մի քանի տուն գողթեցիներով կազում է Թուլ քաղաքակի անդամ գերազանց մահմեդական ուժի դէմ։ Նրա յուսահատական օգնութիւն էր հայցում իւրայիններից, մեր ականջին գիպան նրանց ձայնի ազեխարչ ճիչը... և մեր սիրտը կատ-կատ եղաւ... Ապա Սմբատը իր մի քանի ընկերներով վազեց օգնութեան. հանապարհին, Գաւա-Բոյանի բարձրութիւնից սկսած տեսատարափ գնդակների տակով անցնում է Բաշ-Գառնի։ Ձանապարհին կորցնում է երկու խիզախ կուռդների (Ելօն և մի ուրիշը). ապա ձորը կորցրած կատաղի վազրի նման ընկնում է Թուրքերի վրա և ցրվում ազատում Բաշ-Գառնին։ Այստեղից կայծն ընկաւ և մեր Գառնի-Բագրում. այժմ մահմեդականները հանապարհների վրա գարանամուտ են լինում և խփում են պատահած հային։

Հոկտեմբերի 31-ին Գառնի-Բաւարից դէպի Երևան տանող խճուղու վրա, Թազապիդի մօտ, Թուրքերը յարձակվում են հայերի վրա, մի քանիսը փախչում թագնվում են նրանց աչքերից մթութեան մէջ, իսկ Յովհաննէս Մ. Սիրմանեանին զնդակահար են անում, գլուխը կտրում և Թողնում հետևում։ Ցաւալի կարգ, որ Թուրքերը վարձատրում են հայի գլուխ ատելով մահմեդականին. վերջին փաստը կարծես ճշդում է այդ լուրը։

Ս. Տէր-Թովմասեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1905 թ. օգոստոսի 1-ին արված Բարձրագոյն Անուանական Ուկազի հիման վրա, ներքին գործերի մինիստրի և երկրագործութեան ու հողագիներարութեան մինիստրի հետ համաձայնութեամբ

«հասատում եմ»

Թիֆլիս, 4 նոյեմբերի, 1905 թ. Ներքին հայոց գործերի Մինոստրութեան Փոխարքայ Կովկասում գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկով։

ԿԱՆՈՆՆԵՐ

1903 թ. յունիսի 12-ի օրենքի հիման վրա արտաքին կառավարութեան յանձնված հայ-լուսաւորչական եկեղեցու ընդունված գոյների եւ դրամագլխների վերադարձման կարգի մասին՝ այդ եկեղեցու պատասխանատու հաստատութիւնների վարչութեան, համաձայն 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրկազի.

1) Հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանող

և արքունի վարչութեան մէջ ընդունված գոյքերի և դրամագլուխների հայ-լուսաւորչական պատշաճաւոր հոգևոր հաստատութիւններին վերադարձնելու մասաւոր կարգադրութիւնը կովկասեան փոխարքայութեան նահանգներում, շրջաններում և առանձին շրջաններում, ինչպէս և այդ յանձնման մասաւոր վերահսկողութիւնը տրվում է ըստ պատկանելոյն նահանգապետների, գինուորական նահանգապետների, շրջանների և առանձին շրջանակների պետերին։ Նրանց վարչութեան յանձնվում են. 1) Ներքին գործերի մինիստրութիւնից, այդ մինիստրութեան տրամադրութեան տակ գտնվող և հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանող բոլոր դրամական գումարները, ինչպէս ընդունված դրամագլուխները բարդված տոկոսներով, և եկեղեցական ու վանական անշարժ կալուածների եկամուտները, որոնք յանձնվել են այդ մինիստրութեան, նախկին երկրագործական մինիստրութիւնից, չը ծախսված մնացորդները այն 10%-այնի հաշիւից, որ այդ եկամուտներից պէտք է ծախսվեր կալուածների կառավարութեան և պահեստային դրամագլուխ կազմելու համար և 5%-այնի այն մնացորդը, որից պէտք է կազմվեր օժանդակ դրամագլուխ և այլն և նոյնպէս դրամագլուխների հետ գրաւած բոլոր փողային և դրանց համապատասխան դոկումենտները և 2) Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի վարչութիւնից—բոլոր ունեցած արձանագրութիւնները ու ցուցակները, կազմված 1903 թ. եկեղեցական կալուածների և դրամագլուխների յարքունիս դրաւելու ժամանակ։

Ծանօթ.—Դրամական գումարները և դոկումենտները, արձանագրութիւնները, ցուցակները և այլն ուղղվում են այն նահանգապետների և շրջանի պետերին, որոնցից մտել են մինիստրութեանը և Փոխարքայի վարչութեան մէջ։

2) Գոյքերի և դրամագլուխների յանձնումը արագացնելու և այդ գործողութեան ծախքերը կրճատելու նպատակով, դրամական գումարները, դրամական և ուրիշ դոկումենտները ու մատեանները, նահանգապետները և շրջանի պետերը ուղղում են հայոց եկեղեցու այն հաստատութիւններին, որոնցից ընդունվել են, կցելով—այն դէպքերում, երբ վերադարձվում է 1905 թ. ընդունված գումարից աւելի շատ կամ պակաս—այն հաշիւները, որոնք բացատրում են այդ հաշիւները։

Դրամների և դրամական դոկումենտների ստացման համար յիշեալ հաստատութիւնները պարտաւորված են նահանգապետներին կամ շրջանի պետին, 7 օրվայ ընթացքում, և եթէ որ և է պահանջ է լինում իրանց տեղեկագրերի մէջ, յիշում են այդ մասին։

3) Այդ նպատակով հայ-լուսաւորչական եկեղեցու անշարժ կալուածների անմիջական յանձնման գործը դրվում է առանձին յանձնող մասնաժողովների վրա, որոնք կազմում են տեղական իշխանութեան հայեցողութեամբ նշանակված—ներքին գործերի և երկրագործութեան մինիստրութիւնների ներկայացուցիչներից։ Այդ երկու վարչութիւնների կողմից նշանակված ներկայացուցիչները ստանում են իրանց իշխանութիւնից պատշաճաւոր յուսմունք, դոկումենտներ և նոյնպէս պատճառական առաջադրութիւններ։

Ծանօթ.—Ղեկավարելու համար այն մասնաժողովի գործողութիւնները, որի վրա դրված կը լինի էջմիածնի վանքի կալուածների յանձնումը, Երևանի նահանգապետի կողմից լիազօրութիւն է տրվում փոխ-նահանգապետին։ Թիֆլիսում յանձնողական մասնաժողովի ղեկավարութեան համար նշանակվում է առանձին անձն՝ կովկասեան իշխանութեան հայեցողութեամբ։

4) Յանձնողական մասնաժողովների գործունէութեան ծրագիրը մշակվում է նահանգապետների, շրջանային պետերի և երկրագործական ու պետական կալուածների վարչութիւնների տեղական պետերի համաձայնութեամբ։

5) Հայ-լուսաւորչական հոգևոր վարչութեան կողմից անշարժ կալուածների ընդունելութեան համար լիազօրութիւն են ստանում—եկեղեցիների գոյքերը ընդունելու համար՝ թեմական իշխանութեան կողմից նշանակված անձինք, եկեղեցու աւագ քահանայի և երէցփոխի մասնակցութեամբ. սեմինարիաների գոյքերի համար—հոգաբարձութիւնների անդամները, վերջինների ընտրութեամբ, 3—4 թուով, սեմինարիայի տեսչի մասնակցութեամբ, իսկ վանական կալուածների համար—վանահայրը և հոգևոր վարչութեան կողմից դրա համար նշանակված 9—3 թուով անձեր վանքի միաբանութեան միջից, կամ եթէ միաբանութիւն չը կայ, ուրիշ հոգևոր և աշխարհական անձերից։

Ծանօթ.—Էջմիածնի վանքի գոյքը հոգևոր վարչութեան մէջ ընդունելու գործի ղեկավարութեան համար, ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսը մի առանձին լիազօր է նշանակում։

6) Գոյքերը յանձնելու ժամանակ, յանձնողական մասնաժողովները հրաւիրում են իրանց յանձնված գործի աջակցութեան համար՝ քաղաքներում—քաղաքային վարչութեան ներկայացուցչին, իսկ դիւղերում—գիւղական տանուտէրին և 2 բարեխիղճ անձանց տեղական ժողովրդից։

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XL

Մեր դրութիւնը, այո, բացառիկ է, բոլորովին անսովորական և մենք պիտի երկար ու լուրջ մտածենք նրա վրա։

Անցեալ անգամ ես մի քանի խօսքով բնորոշեցի այդ հանգամանքը։ Ոչինչ օգնութիւն հեռաւորների կամ մերձաւորների կողմից, ոչինչ առանձին ուշադրութիւն դէպի մեր տառապանքները, նոյն իսկ և ոչ ձրի համակրանք, ցաւակցութիւն, մխիթարիչ մի խօսք։ Ազգերի համերաշխութեան մասին երազներ շատ ունէինք. ազատական գաղափարը, կարծում էինք, կը մօտեցնէ ազգերի մէջ գոյութիւն ունեցող առաջադէմ ռազմիկ տարրերը, կը կազմէն մի բանակ խաւար ոյժերի, բռնակալութեան դէմ։ Թաթարական սուրը եկաւ ցոյց տալու թէ դրանք ցնորքներ են։ Հայը սպանդանոց հանվեց բռնակալութեան գահի ձեռքով։ Եւ նրա արիւնը, նրա տանջանքները ոչինչ ազդեցութիւն չարին ամեն կողմից այդ սպանութեան նպատակներին։ Կարծես դա մի հրէշ էր, որի մահը միայն բաւականութիւն կարող էր պատճառել շրջապատին։ Ցոյց տուէք մի ուրիշ ազգութիւն, որ այսպիսի ճակատագիր ունեցած լինի։

Ցոյց տալ չէք կարող։ Չը կայ այդպիսի մի ազգ քաղաքակիրթ մարդկութեան մէջ։ Ահա դժբախտ հրէաները Ռուսաստանում սրի և կրակի մատնվեցին։ Բայց հայի այժմեան վիճակը նմանն է հրէական ազգի վիճակին։ Ո՛չ, Թշուառութեան կողմից մենք ներկայ րօպէին գերազանցում ենք հրէաներին։ Իսրայէլի բազմատանջ զաւակները ժամանակ առ ժամանակ են ենթարկվում բարբարոսական հարուածներ։ Ռուս խուժանը, տգիտութեան և խաւարի այդ թշուառ, անսահման թշուառ զաւակը, երբեմն վեր է կենում հրէաներին ջարդելու, յագեցնում է իր արիւնածարաւ հակումները և ապա հանգիստ է տալիս թէ իրան և թէ իր անբախտ գոհերին։ Հրէական ջարդերը տեղի են ունենում երկար ընդհատումներով. մի տարի մի կողմում, միւս տարի մի ուրիշ տեղ։

Իսկ մենք։

Ինչ ամիս է, անընդհատ ջարդվում ենք, անընդհատ խորտակվում ենք։ Մեր հարևանների ձեռքում դրել են սուր, դրել են նրա վրա «անպատիժ մնայ» խօսքերը ու բաց թողել մեզ դէմ։ Երբ և իցէ կը խլվի այդ սուրը թուրքի ձեռքից։ Ոչինչ նշան չէ երևում։ Ոչինչ հաւատիացում չը կայ։ Եւ թուրը, յատկապէս հայի համար սրված թուրը գործում է։ Ինչ ամիս է, մենք պատերազմի մէջ ենք։ Եւ ինչ իրաւունքով պիտի հաւատանք թէ այդ պատերազմը դեռ երկար չը պիտի տևէ։ Ո՞վ է մեզ կարեկցողը։

Պատմութեան որ էջում էք տեսել, որ մի խաղաղ ժողովուրդ այսպիսի երկարատև տանջանքների մատնված լինի։ Շատ են հրէայի թշնամիները, շատ անգութ ու անողոք են այդ թշնամիները։ Բայց հայի դէմ առած կրճատող թշնամութիւնը իսկապէս զարհուրելի է, իր նմանը չունի։ Եւ այս ահաւոր ճշմարտութիւնը մենք, վերջապէս, պիտի լաւ ըմբռնենք, պիտի հասկանանք, հասկանանք...

Մայրաքաղաքի առաջադէմ թերթերից մէկը նորերումս հարցնում էր. երկիր կը դիմանայ հայը անհաւասար կռիւն։

Ի՞նչ սիրտ պղտիցող, օրհասական հարց։—Արդեօք երկիր կը դիմանանք...

Բիւրօկրատիական ոճրագործ խրատուսանքներով թև առած թուրքը շարունակում է ոռնդով զինվել։ Ամեն օր մենք կարդում ենք, լսում ենք սարսափելի տեղեկութիւններ։ Ամենակատարելագործված զէնքերի պաշար է մթերվում, այնպիսի պաշար, որ կարող է տարիների պատերազմի նիւթ հայթայթել։ Պատերազմ, բայց ո՜ւմ դէմ։—Ամենից առաջ և ամենից շատ մեզ դէմ...

Հիմա եկէք և ցոյց տուէք, թէ կայ արդեօք մի ուրիշ ժողովուրդ, որ խաղաղ ապրէր մի պետութեան մէջ և մատնված լինէր այսպիսի ճակատագրի։

Մեր դրութիւնը միանգամայն բացառիկ է, արտակարգ, ոչինչ նմանութիւն չը ճանաչող...

Ներկայ սև տարին ծանր թշուառութիւնների տարի էր։ Մենք ծեծ կերանք, բայց և դառն դասեր ուինք մեզ ըղձապատող իրականութիւնից։ Տեսանք ամեն տեղ ճռճռան ֆրազների տակ թաղնված ազգայնական նախապաշարմունքներ, չկամութիւն՝ փշերի պէս մեզ դէմ, ուղիղ դէպի մեր կուրծքը ցցած։ Տեսանք, որ հայասիրութիւն ոճրագործ սխտամից ոչ մի բանով չէ մնում արմատական, ազատատէր աշխարհահայեցողութիւնը. եթէ առաջինը յանցաւոր է իր խրախուսանքներով, երկրորդը աւելի յանցաւոր է իր ամաթդի անտարբերութեամբ։

ԲԱՆԱՍՄՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

—

Ցայտնի ֆելիետոնիստ Դօրօշեվիչը „Русское Слово“ լրագրի մէջ տալիս է թիւրք վարչական պաշտօնեայի մի շատ հետաքրքրական տիպը։ Այդ տիպը, սակայն, չէ կարելի բացառապէս թիւրքական անուանել։ Ռուսահայերը 1905-ի արիւնոտ օրերով ապացոյցներ շատ տուին թէ իրանց թիւրքահայ եղբայրների վիճակակիցն են, չը նայած որ ապրում են քրիստոնեայ պետութեան մէջ։ Ուստի պ. Դօրօշեվիչի ներկայացրած տիպը շատ հետաքրքրական պիտի լինի և ռուսահայերի համար։ Նայելով այդ տիպի գծերին, նրանք կը հասկանան թէ թիւրքիայի բարբարոս վարչական սիստէմը և թէ գուցէ այդ օրինակի միջոցով կը ճանաչեն և մեր կողմերը կառավարողներից շատերին։ Ոը այս վերջին հատկանականութիւնը բոլորովին մոացածին չէ, ցոյց է տալիս ռուս լրագրի խմբագրական ծանօթութիւնը. նա յայտնում է թէ պ. Դօրօշեվիչի այս յօդուածը դեռ յունիս ամսին (յիշեցէք, որ այդ ժամանակ Նախիջեանի կոտորածներն էին) է եղել ուղարկված, բայց այն ժամանակ կարելի չէ եղել ապել ցնդուրական պայմանների պատճառով։ Այժմ արդէն Ռէշիդ-բէյերը Ռուսաստանում այնքան շատ են, որ ծածկել էլ անհնար է։

Մենք թարգմանում ենք պ. Դօրօշեվիչի յօդուածը։

—

11 տարի առաջ Ռէշիդ-բէյը դատապարտված էր տաժանակիր աշխատանքների և այդ դատավճիռը հրատարակված էր բոլոր լրագիրներում։

Այս րօպէին Ռէշիդ-բէյը Տրապիզոնի ամենակարող նահանգապետն է։

Խրատական մի կերպարանափոխութիւն։

Ես սարն էի բարձրանում Տրապիզոնի կեդրոն փողոցներով։ Տների պատուհանները երկաթէ վանդակներով։ Տրապիզոնում ոչ ոք հանդիստ չէ քնում։

Այդ փողոցներով գլխիվայր, հեծեծանքներով, սարսափից դուրս կորցրած, մի քանի տարի առաջ փախչում էին հայերը։ Դէպի ցած, դէպի նաւահանգիստը։ Այնտեղ կանգնած էին եւրոպական շոգենաւեր, որոնք խարխափ հանեցին և հեռացան, որպէս զի չը խառնվին Թիւրքիայի ներքին քաղաքականութեան մէջ։

Ներքևում հայերին հասան Թիւրքերը և քշերը։ Ծովափը լցվեց դիակներով։ Ջուրը ափի մօտ ներկվեց քնքոյշ—ալ գոյնով։

Հին մահմեդական գերեզմանատան մօտ, որ քնած է ահագին սև կիպարիսների տակ, քաղաքի կենտրոնում, ես հանդիպեցի Թիւրք մի փաշայի։ Նա հեծած էր արաբական մի փառահեղ նժոյգ։ Մի երիտասարդ էր, փոքրիկ սև միրուքով, պինտէ դրած։ Շատ շնորհալի տեսք։ Գեղեցիկ էր։ Արտաքինը—բոլորովին եւրոպական։ Կատարեալ գէնդլի, որին իսկոյն կարելի էր մացնել ամեն մի սալօնի մէջ։ Այդտեղ նա «սիրտ ուտող» կը լինէր։

Արաբ նժոյգը գնում էր արագ։ Նրա հետ մի շարքով, ասպանդակի մօտ, հեալով, վազում էր ոչ թէ մի մարդ, այլ ցեխի մի գունդ։ Դէմքը, ֆէսը, համազգեստը—միապաղաղ ցեխ։ Նոյն իսկ աչքերը չէին երևում։

Դա ոստիկան էր, որ պարտաւոր էր վազել նահանգապետի եռանից և իմանալ՝ չի՞ լինի արդեօք որ և է հրաման։

Մի պատկեր թիւրքական ճաշակով։ Եւրոպական ջինտլմէն փաշա և նրա կողքին—մի մարդ շան դերում։

Փաշան չափ գցեց ձին և ամբակների տակից ցեխը շաորուանի պէս էր թռչում դժբախտ գիակի վրա։ Բայց նա մի վերջօկ անգամ յետ չէր մնում ասպանդակից։ Դժուար էր ծծաղը պահել, այնպէս էին արագ փոփոխվում նրա կրունկները։

Իմ թարգման յոյնի հետ պատահելիս մի ինչ-որ բան տեղի ունեցաւ։ Ես կարծում էի թէ խեղճը ցած է գլորվում կառքի առջևից։

—Ռէշիդ-բէյը,—գոռաց նա դէպի ինձ, երբ փաշան անցաւ։

Եւ նրա դէմքի վրա սարսափ և ակնածութիւն երևաց, կարծես խօսում էր Աստուծու մասին։

—Տրապիզոնի վալին։ Օ՜, մեծ մարդ է, ուժգին մարդ է, անագին մարդ է։

—Անգիտան և թիւրապրա մարդ,—ասաց Ռէշիդի մասին այն երեկոյեան մի ֆրանսիացի, կարևոր մի անձ, «Dette publique»-ի դիրեկտօրներից մէկը.—և այդպիսի մի տիպին մենք պիտի ձեռք տանք։ Ծայատառակութիւն։

Ռէշիդ-բէյի հակատագիրը մի ամբողջ ֆէերիա է։

12 տարի առաջ Ռէշիդ-բէյը, երիտասարդ, պատուաւոր մի թիւրք, որ կրթված էր Պարիզում, «եւրոպացի մինչև ոսկորների ծուծը», ամուսնացաւ թիւրք մի նշանաւոր առնի աղջկայ հետ, որ հարուստ էր, եւրոպական կրթութիւն ստացած և, ասում են, շատ գեղեցիկ։

Սակայն—փափուկ մի հանգամանք—կանայք Ռէշիդ-բէյի համակրանքները չէին վայելում։ Ռէշիդ-բէյի կնոջ հակառակորդ հանդիսացաւ նրա, այսինքն այդ կնոջ, եղբայրը։ Հաղուագիւտ գեղեցկութեան տէր մի տղայ։ Ռէշիդ-բէյը նրան հանգստութիւն չէր տալիս։ Եւ մի անգամ դժբախտ տղային գտան վաննայի սենեակում արիւնաթաթախ ընկած։

Ռէշիդ-բէյը կատարել էր նրա վրա քաոսիեի յանցանք։ Տղան հակառակվել էր և կատաղած Ռէշիդը գործի էր դրել խէնջարը։ Նա բռնաբարել էր կիսամեռ երեխային։

Ռէշիդի կինը չուզեց այդ գործը թողնել անպատիժ։ Ապահարզան պահանջեց։ Շնորհիւ առնուանական ծագումի, շնորհիւ հարստութեան, նրան աջողվեց արդարութեան հասնել նոյն իսկ Թիւրքիայում։ Նրան ապահարզան տուին։ Ռէշիդ-բէյին դատեցին և դատապարտեցին տասնամեայ տաժանակիր բանտարկութեան։

Նոյն իսկ սուլթանը վրդովված էր Ռէշիդի յանցանքից և հրամայեց գործադրել Թիւրքիայում դեռ չեղած մի մէջոց։ Հրամայեց Ռէշիդի դատապարտութեան վճիռը տպագրել բոլոր լրագիրներում։

—Որպէս զի օրինակ լինի ամենքի համար։

Բոլոր լրագրները տպեցին առաջին երեսում սուլթանի հրամանը։

—Ռէշիդ-բէյը այն քառասնեակ յանցանքի համար, որ կատարել է իր կնոջ եղբօր վրա, բարոյականութիւնը և ընտանեկան սկզբունքը աղտոտելու համար, զրկված է բոլոր պատիւներից, աստիճաններից, իրաւունքներից, բանտարկված է 10 տարով, և այս դատավճիռը հաստատել է նորին մեծութիւն փադիշահը և տպագրվում է, նորին մեծութեան հրամանով, իբրև օրինակ, բարձր և անողոք արդարութեան, բոլոր ուղղահաւատներին երկիւղ և խրատ ազդելու համար։

Ռէշիդը ոչնչացաւ։

Իսկ դրանից վեց ամիս անցած նորից բոլոր լրագիրներում երևաց հրաման.

Ռէշիդ-բէյը նշանակվում է Մօնաստըրի վալի (նահանգապետ)։

Ի՞նչ էր պատահել։

Վերջնականապէս խորտակվելով, շղթայակապ, ուննենալով առջևում 10 տարվայ տաժանակիր—Թիւրքական տաժանակիր—բանտ, Ռէշիդ-բէյը նամակ գրեց սուլթանին և գլխաւոր ներքինին։ Առաջարկում էր տալ իրան վարչական պաշտօն։

Մի ինչ-որ ճանապարհով, իր ազգականների միջոցով, նա տեղ հասցրեց այդ նամակները։ Ելդըզ-Քիօսկում հետաքրքրվեցին այդքան անտովոր մի առաջարկութեամբ։ Գլխաւոր ներքինին կամեցաւ տեսնել Ռէշիդին։

Ե. Ղազարյանի անվան գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողները ամեն տարի ամռանը մեկնում են արտադրական պրակտիկայի։ Այս տարի էլ նրանք գնացին տարբեր շրջաններ։ Ոմանք ուղարկվեցին Ղազանչի, ոմանք՝ Ղարաքիլիսա, ոմանք էլ՝ Ղարաքենդ։ Ամենքն էլ ուրախ էին, որ պրակտիկայի ժամանակ կարող են ծանոթանալ գյուղատնտեսության նոր մեթոդներին, որոնք կիրառվում են սովետական գյուղատնտեսության մեջ։

Ղարաքենդում պրակտիկա անցնող ուսանողներին ընդունեց կոլտնտեսության նախագահ Ամո Ղազարյանը։ Նա ուսանողներին ծանոթացրեց կոլտնտեսության տնտեսության հետ, ապա ասաց.

— Ընկերներ, ես ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ մեր կոլտնտեսությունում։ Ես գիտեմ, որ դուք եկել եք ոչ թե զբոսանքի, այլ աշխատելու։ Ես գիտեմ նաև, որ դուք ձեր գործնական աշխատանքով պետք է օգնեք մեզ՝ կոլտնտեսականներին, ավելի բարձրացնելու մեր տնտեսության արտադրողականությունը։ Ես հավատացնում եմ ձեզ, որ մենք ամեն կերպ կաշխատենք, որպեսզի ձեր պրակտիկան անցնի հաջող։

Ապա նախագահը ուսանողներին հանձնեց կոլտնտեսության բրիգադներին։

Ես ընկերների հետ գնացի ոչխարանոց։ Ոչխարանոցի վարիչ Ալեքսանդր Ղազարյանը ինձ ծանոթացրեց ոչխարանոցի տնտեսության հետ։ Ես տեսա, որ ոչխարանոցում ամեն ինչ կազմակերպված է։ Ոչխարները մաքուր են, կերակրվում են ժամանակին։ Ոչխարանոցում կան նաև մի քանի տրակտոր։ Ես հարցրի Ալեքսանդրին, թե ինչ նպատակով են տրակտորները ոչխարանոցում։ Նա պատասխանեց, որ տրակտորները ոչխարանոցում օգտագործվում են ոչխարների համար կերի պատրաստման ժամանակ։

Ես հարցրի նաև, թե ինչ կերեր են պատրաստում ոչխարների համար։ Ալեքսանդրը պատասխանեց, որ ոչխարների համար կերեր են պատրաստում գարուց, վարսակից, եգիպտացորենից և ուրիշ կերերից։

Ես հարցրի նաև, թե ինչ կերեր են պատրաստում ոչխարների համար ձմռան ամիսներին։ Ալեքսանդրը պատասխանեց, որ ձմռան ամիսներին ոչխարների համար կերեր են պատրաստում խոտից, եգիպտացորենից և ուրիշ կերերից։

Ես հարցրի նաև, թե ինչ կերեր են պատրաստում ոչխարների համար ամռան ամիսներին։ Ալեքսանդրը պատասխանեց, որ ամռան ամիսներին

Լուծիչն է՝ Կարծես բոլորն էլ դնում են իրենց գլուխը, որ նրանք էլ ասելիք ունեն, եւ ամեն մեկն էլ ուզում է ասել իր ասածը։

Հանելուկ 24-ին

Մեկ հայ գյուղացին տանում էր քաղաք վաճառելու իր ոչխարները։ Ճանապարհին նրան հանդիպեց մի հրեա, որ ուզում էր գնել ոչխարները։ Նրանք համաձայնվեցին 10 ոչխարի վրա, որ հրեան վճարի գյուղացուն 20 ռուբլի։ Գյուղացին ոչխարները հանձնեց հրեային, իսկ հրեան նրան տվեց 20 ռուբլու փոխարեն 10 ռուբլի։ Գյուղացին ասաց, որ ինքը ոչինչ չի հասկանում այդ գործի մեջ։ Ինչպե՞ս պետք է հասկանալ այդ։

Լուծումը

Գյուղացին ոչինչ չի հասկանում այդ գործի մեջ, որովհետեւ նա չգիտի, որ հրեան ոչխարները գնում է 2 ռուբլով, իսկ վաճառում է 1 ռուբլով։ Հրեան ոչխարները գնում է 2 ռուբլով, որովհետեւ նա գիտի, որ գյուղացին ոչխարները ուրիշ տեղ չի կարող վաճառել, քանի որ ուրիշ տեղ ոչխարները 2 ռուբլուց պակաս չեն։ Հրեան ոչխարները վաճառում է 1 ռուբլով, որովհետեւ նա գիտի, որ գյուղացին ոչխարները ուրիշ տեղ 2 ռուբլուց պակաս չի վաճառի։ Հրեան ոչխարները գնում է 2 ռուբլով, վաճառում է 1 ռուբլով, ուրեմն նա կորցնում է 1 ռուբլի։ Գյուղացին ոչխարները վաճառում է 10 ռուբլով, գնում է 20 ռուբլով, ուրեմն նա կորցնում է 10 ռուբլի։ Հրեան կորցրեց 1 ռուբլի, իսկ գյուղացին՝ 10 ռուբլի։ Ուրեմն հրեան 10 անգամ ավելի կորցրեց, քան գյուղացին։

Հանելուկ 25-ին

Ես ամեն առավոտ ժամը 7-ին դուրս եմ գալիս տնից եւ գնում եմ գործարան։ Ճանապարհին ես հանդիպում եմ մի ուրիշ մարդու, որ նույնպես գնում է գործարան։ Ես գիտեմ, որ նա ամեն առավոտ ժամը 7-ին դուրս է գալիս տնից եւ գնում է գործարան։ Ես գիտեմ նաեւ, որ նա ամեն առավոտ ճանապարհին հանդիպում է ինձ

խոշորները, չը բաւականանալով արօտատեղերը բռնի իւրացնելով, անագին տարածութեան վրա այրում են ուրիշների արօտատեղերը և քշում տանում մի քանի անասնատէրերի հօտերը։ Սպասվում է արիւնալի ընդհարում։ Դիմել եմ զրագունների ավերման գնդի պետին։

—

Երէկ, նոյեմբերի լոյս 10-ի գիշեր Բագուից Թիֆլիս եկող մարդատար գնացքը Ալթաղլիա կայարանի մօտերը գարնվել է Թիֆլիսից Բագու գնացող մարդատար գնացքի հետ։ Ասում են, որ սպանված է 3 մարդ և ծանր վիրաւորված 28 հոգի։ Մանրամասն տեղեկութիւններ դեռ պակասում են։

—

Թիֆլիսի ոստիկանապետը հետևեալ առաջարկն էր արել քաղաքային դումային. ուժեղացրած պահպանութեան վերացումով՝ ինքն ըստ ինքեան ոչնչանում է ոստիկանութեան իրաւունքը դռնապաններ պահելու, նրանց իր «պէտքերին» ծառայեցնելու, նրանց նշանակելու և նրանց վրա հսկելու։ Դռնապանների սիստէմը քաղաքն այժմ կարող է ոչնչացնել։ Բայց ոստիկանապետն առաջարկում է, որ ուպրավան իր վրա առնէ դռնապանների հարցը և նրանց կրկին պահէ իբր մաքրիչներ և այլն։ Ուպրավան կարականապէս մերժել է ոստիկանապետի այդ առաջարկը։—Ես յիրաւի, ինչու՞ պահել դռնապաններին. մինչև այժմ նրանք ծառայում էին ոստիկանութեանն իբր լրտեսներ, իբր «կարգ վերահաստատողներ» իրանց փայտերով... Հայ և վրացի տանտէրերին ստիպում էին անպատճառ ռուս դռնապան պահել և այն էլ յատկապէս ոստիկանութեան ներկայացրած անձին... Այդ դռնապաններից շատերը խուլիգանական ամենադիւրաբորբոք տարրեր են։ Ուրեմն՝ էլ ինչու՞ պահել։ Նրանց միակ ծառայութիւնը փողոցների ու բակերի մաքրութիւնն է. կարելի է պարտաւորեցնել տանտէրերին մաքուր պահել բակերն ու փողոցները։ Իսկ այդ պարապիտական պաշտօնը պէտք է վերացնել ընդ միշտ։

—

Սրնախի գաւառապետը հեռագրում է նոյեմբ. 9-ին. «Պետական գիւղացիների 4 մեծ հասարակութիւն Քիլիխայում, դուրս քշելով տեղական բոլոր ոստիկաններին, խմբերով կոտորում են պետական անտառները։ Ջուգանի համայնքը, հրաժարվելով ակցիզ վճարելուց, դիմադրութիւն ցոյց տուեց ակցիզի պաշտօնեաներին և բռնի հեռացրեց նրանց իրանց գիւղից։ Շարժումը աճում է։ Իմ իշխանութեան տակ չունենալով բաւարար ոյժ, սպասում եմ հրահանգի»։

—

«Баку» լրագիրը լսել է, որ Բագուի փոխնահանգապետ Պ. Ա. Լիլէեվը մտադիր է թողնել իր պաշտօնը։ Երևի պ. Լիլէեվն իր կուլտուրական ու լուսաւորիչ միսիան փառաւորապէս վերջացրած է համարում և գնում է այժմ դափնիների վրա հանգչելու։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Անցեալ սեպտեմբեր 18-ից Դանձակում բացվել է էժանագին գրադարան-ընթերցարան, «Լոյս» անունով։ (Հայկական թաղում։ Մուտքը չքաւորներին ձրի է)։ Վաղուց կարիք էր զգացվում մեր քաղաքում այսպիսի մի հաստատութեան, որ կարևոր նշանակութիւն ունի ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացմանը։ Ուշադրութիւն ենք հրաւիրում մեր հասարակութեան բարեմիտ մասի այս հաստատութեան գոյութիւնը ապահովելու վրա։ Առանձին շնորհակալութեան արժանի են այն մի քանի պ. պ. որոնք ոչ մի խոչնդոտի առաջ կանգ չառնելով կարողացան իրականացնել այս հիմնարկութիւնը։ Կրկին անգամ խոնարհաբար խնդրում ենք հայ հեղինակներին և խմբագիրներին, որ իրանց խմբագրութեամբ լոյս տեսնող թերթերից կամ գրքերից մի-մի օրինակ նուիրեն մեր, միջոցներից զուրկ, գրադարան-ընթերցարանին»։

—

Արդարադատութեան մինիստրութեան մէջ մի յատուկ յանձնաժողով մշակել է մի օրինագիծ անձի անձեռնմխելիութեան մասին.—մի բան, որին ծարաւի է ամբողջ Ռուսաստանի ազգաբնակութիւնը, որովհետև անձն է, որ մեր հայրենիք Ռուսաստանում և ծննդավայր Կովկասում ամենից աւելի ձեռնմխելի է։ Այդ նոր օրինագիծը վերացնում, չնչում է այն բոլոր օրէնքները, ծանօթութիւնները և լրացումները, որ մտցրել և կցել են 1864 թուից այս կողմ՝ նոյն թուի օրէնքին. և յատկապէս այդ նորամոյծ մասերն են, որոնք իրաւունք են տալիս ոստիկանական և ազմինիստրատիական իշխանութիւններին հալածելու, պատժելու և իր քմքի համեմատ վարվելու անհատների անձի հետ։ Այդ նախագիծն այս օրերս քննութեան է ենթարկվելու Մինիստրների Խորհրդում։

—

Հռչակաւոր լեհացի գրող Հ. Սենկևիչը «Русь»-ում դիմում է ռուս հասարակութեանը և յայտնում, որ լեհական սեպտարատիզմ չը կայ և չէ կարող լինել։

—

Պետերբուրգում լուրեր են սաստկով, որ Խարբինում սաստիկ յուզում է տիրում զօրքերի մէջ։ Զինուորները մահվան են դատապարտել օֆիցէրներից 10 հոգու։

—

Պետերբուրգի բոլոր կառավարական հիմնարկութիւններին շրջաբերականներ է ուղարկված անյապաղ պաշտօնից արձակելու այն բոլոր պաշտօնեաներին, որոնք «չինովնիկների» դաշնակցութեանը անդամակցում են։

—

Մեզ հաղորդում են, որ «Մշակ»-ի երէկվայ համարում Երևանից գրված լուրը այնտեղի Հ. Յ. Դաշնակցականների մարմնի կողմից այստեղ հեռագիր ուղարկված լինելու և Թիֆլիսի կազմի կողմից Փոխարքային դիմելու խուլիգանների պատրաստած ցոյցերի առիթով Երևանում—բացարձակ անհիմն է։ Այդպիսի բան չէ եղել և լինել էլ երբէք չէ կարող։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Հայոց Դրամատիական ընկերութեան ընդհանուր ժողովի շարունակութիւնը պէտք է լինի առաջիկայ կիրակի, նոյեմբերի 13-ին։

—

Մօսկվայից հեռագրում են «Возр.» լրագրին նոյեմբերի 9-ից. «Գիւղացիական դաշնակցութեան պատգամաւորների երկրորդ նիստում շարունակեցին զեկուցումներ ամենքն իրանց վայրերի մասին։ Նրանց հաղորդածները նկարագրում են նոյն պատկերը, ինչ որ նախընթաց զեկուցումները։ Սարատովի պատգամաւորները հաղորդեցին, որ իրանց նահանգում ոչ թէ անկարգութիւններ են, այլ բացարձակ և լիակատար ապստամբութիւն։»—Մեր ընթերցողներին յայտնի է, որ Պետերբուրգից Սարատով է ուղարկված մի գեներալ-ադիւտանտ ամեն տեսակ լիազորութիւններով՝ հաշտեցնելու այդ նահանգը, ինչպէս մի սատրապ։

—

Տիֆլիսի գաւառապետ Ստացանք նուէր, համաձայն «Մշակի» № 204-ի ուսուցիչ Թորոս Պետրոսեանից (Ախալ) իր ռոճկի 2% 1 ր. 40 կոպ.։

—

Կազանից հեռագրում են «Н. Вр.» լրագրին, որ այնտեղ կազմվել է միապետականների մի զօրեղ կուսակցութիւն, որի նշանարանն է «Ցարի և ժողովրդի համար»։

—

Կվիբիլից հաղորդում են, որ նոյեմբ. 8-ին № 6 մարդատար գնացքը, բաղկացած 6 վագոնից, գծից դուրս է թռել։

—

Տիֆլիսի կայարանից հեռագրում են նոյեմբերի 8-ին, որ նոյեմբ. 7-ի առաւօտեան 10½ ժամին, երբ կովկասեան գնացքը կանգնած էր կայարանում, Բօմանօվսկի գիւղի բնակիչները յանկարծ կայարան լցվեցին, դուրս քաշեցին վագոնից իրանց գիւղի ուրեդնիկ Օսիպ Բիչելովնիկօվին, որը ձիագողների գողակից էր եղել, սաստիկ ջարդեցին նրան փայտերով, մահվան դուռը հասցրին և նետեցին ցեխի մէջ ու հեռացան։

—

Պետերբուրգից հեռագրում են Возр. լրագրին նոյեմբերի 9-ին. «Վերջին օրերս յաճախ լուրեր էին պատում ճնշիչ միջոցներ գործադրելու, նոյն իսկ ղինուորական դիկտատուրայի մասին։ «Русь»-ը հաղորդում է, որ ճնշից միջոցներ ործադրելու լուրը մասամբ սուտ է։ Ասում են, որ կրօնաշահատում գնդակահարութեան են դատապարտված 8 օֆիցէր. զինուորներն աւելի նուազ են տուժելու։ Լուրերին նայելով՝ Միշչենկօն նշանակվում է Կովկասի գեներալ-նահանգապետ։—Մինիստրների խորհուրդն առաջարկել արդարադատութեան մինիստրին արտակարգ կերպով տեղեկութիւններ հաւաքել արտատահմանեան օրէնսդրութիւններում 4 արտատահմանեան պետութիւնների մասին։ Անչափահասների պատճառով օրէնքները գործադրութեան կը մտնեն կեանքի մէջ առանց պետական խորհրդի միջամտութեան։—Կայսերական մանիֆեստով գիւղացիներին ներված պարտքի քանակութիւնը հաղորդի յետ գնման համար՝ հասնում է 1,600,000,000 րուբլու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՒՐԳ, 8 նոյեմբերի։ Հուսարեան գնդի գնդային տօնին նոյեմբերի 6-ին Թագաւոր Կայսրը դիմեց գնդին հետևեալ խօսքերով. «Լէյբ-հուսարները միշտ ուրախացրել են իրանց շէֆերի սրտերը իրանց եռանդուն ծառայութեամբ։ Գիտեմ, որ դուք ծառայում էք ինձ նոյնպէս հաւատարիմ և անձնուէր այս ծանր խառն ժամանակում, որը Աստուծով, շուտով կը վերջանայ։ Հաւատացած եմ, որ լէյբ-հուսարների ապագայ սերունդներն ևս նոյնպիսի հաւատարմութեամբ կը ծառայեն իմ որդուն, որպէս ծառայում էին իմ գվարդիան և իմ հուսարները։ Շնորհակալ եմ ձեզանից, պարոն օֆիցէրներ, նոյնպէս և ձեզանից, եղբայրներ, ձեր փառաւոր ծառայութեան համար։ Իմ լէյբ-հուսարների գնդին ուրա»։—Ֆինանսների մինիստրի օգնական Դմիտրիեվ նշանակված է պետական խորհրդի անդամ՝ նրա վրա դնելով ֆինանսների մինիստրութեան պարտաւորութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Հաղորդակցութեան նախարարների մինիստրը, երկաթուղիական ստորին ծառայողների դրութիւնը բարւոքելու նպատակով, առաջարկեց երկաթուղիների վարչութեան պլխաւորին առանց յետաձգելու մշակել բնական մինիմալ և մաքսիմալ ռոճիկները, որոնք բաւարար լինեն տեղական պայմաններին, կանոնաւորել իսկական ծառայութեան մէջ չը գտնվողների և ժամանակաւոր ծառայողների դրութիւնը, վերացնել դրամական տուգանքները յանցանքների համար, կազմակերպել ընկերական պատուի դատարաններ, վերամշակել երկաթուղով ձրի ճանապարհորդելու կանոնները, այն սկզբունքի հիման վրա, որ ձրի ճանապարհորդութիւնը իրաւունք է և ոչ թէ արտօնութիւն, ոչնչացնել աւելորդ ձևականութիւնները տոմսակներ տալու ժամանակ, մինչև կանոնների հրատարակումը անյապաղ բաւարարութիւն տալ այն բանաւորների դրութեանը, որոնց երկաթուղու վարչութիւնը արժանի կը համարէ վերաքննել վարձատրութեան կանոնները հերթից դուրս աշխատանքների և տօն օրերի աշխատանքների համար, մշակել կանոններ պարգևների նպատակները տալու մասին, վերացնել հանումները ինվալիդային դրամագլխի համար այն անձերի պարգևներից, որոնք պետական ծառայութեան մէջ չեն գտնվում, և վերադարձնել մինչև օրս բռնած դրամներ։

ՄՈՒՐԿՈՎ, 8 նոյեմբերի։ Դուման այն համոզմունքը յայտնեց զէմստվոի և քաղաքների ներկայացուցիչների Մօսկվայի համաժողովին, որ համաժողովը անշեղ կերպով կը ձգտի խաղաղ ճանապարհով իրագործելու դէմօկրատիական սահմանադրութիւնը և հասարակութեան լայն շրջանների գիտակցութեան մէջ եռանդով մտցնել ըէակցիայի ջնասակարութեան գաղափարը, ուժից էլ նա բղխէ։ Դուման ցանկալի է համարում, որ համաժողովը պատրաստականութիւն ցոյց տայ պաշտպանել կառավարութեան այն գործողութիւնները, որոնք նպատակ ունեն կեանքի մէջ գործնականապէս մտցնել հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հիմնական սկզբունքները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Արտասահմանեան բօրսաներում ամուր է։ Նոր 4½ տոկոսային փոխառութիւնը Բերլինում—94 և երեք քառորդ։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 8 նոյեմբերի։ Երէկ երեկոյեան զէմ կայացաւ հանդիսաւոր ճաշ ներկայութեամբ կայսրուհի Մարիա Ֆէօդորովնայի, նօրվէգական արքայական զոյգի, արքայական ընտանիքի և նօրվէգական դեսպանութեան։ Արիստոխան Թագաւորն առաջարկեց կենաց ի պատիւ նօրվէգական ժողովրդի և նօրվէգական արքայական զոյգի։ Գաւակօն Թագաւորը պատասխանեց կենացով ի պատիւ դանիական Թագաւորի, յայտնելով, որ կաշխատէ նմանվել իր պապի փայլուն օրինակին և կամենում է նօրվէգական ժողովրդի նոյնպիսի վստահութիւն ստեղծել դէպի ինքն, որպիսին պոյութիւն ունի դանիական Թագաւորի և ժողովրդի միջև։

ՇՈՒՆԳԻԱՅ, 8 նոյեմբերի։ «Մօրնինգ Պոստ» լրագրի խօսքով, Պէկինի չինական և եապոնական լիազօրները խորհրդակցում են եապոնացիների իրաւունքների մասին կապալով վերցնելու Լեհաստանը և արևելեան-չինական երկաթուղիական շերտը գինուորական պաշտպանութեան տակ դնելու և Սինմինտին-Մուկդէն-Իչբի-Ջանչուն-Գիրին նոր երկաթուղիների մասին։

ՎԱՐՇԱՎԱ, 6 նոյեմբերի։ Բրօննայա փողոցի վրա երկաի կառքով անցնող երկու տղամարդ և մի կին կրակեցին պատրուլի վրա, որը պատասխանեց հրացանաձգութեամբ։ Տղամարդիկ սպանվեցին, կինը վիրաւորվեց։

ՐԻԳԱ, 8 նոյեմբերի։ Դուման երէկ որոշեց 10,000 ր. յատկացնել ի նպաստ հոկտեմբերեան անկարգութիւններից զոհաւածների։

ԿԷՂԻ, 8 նոյեմբերի։ Բարեգործական ընկերութեան տնտեսական խորհուրդը որոշեց դադարեցնել ծաւարութիւնը վարել բացառապէս լեհական լեզուով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 նոյեմբերի։ Բաժանվում է դումայի կոչը, որը բացատրում է հոկտեմբերի 17-ի մանիֆեստը մայրաքաղաքի բոլոր քնակիչներին։

Նոյեմբերի 9-ին

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբերի։ Զէմստվային և քաղաքային գործիչների համաժողովի նիստ նուիրված էր այն հարցի վիճաբանութեանը, թէ ինչ վերաբերմունք պէտք է ունենան դէպի Վիտտէի մինիստրութիւնը։ Ժողում էին 20 հեռաօրներ։ Ուշադրութիւն էին գրաւում լեհական հեռաօրների առաջին անգամ հանդիպելը։ Լեհաստանի անունից խօսում էին Դմոբրօվսկի և Լեդնեցկիյ։ Նրանք պատրաստ հաշտութեան շաւղով ընթանալ, բայց խնդրում են վերացնել Լեհաստանի թագաւորութեան մէջ գինուորական դրութիւնը և ուժը դադարեցրած պաշտպանութիւնը, մտցնել, որպէս ժամանակաւոր օրէնսդրական միջոց, լեհական լեզուով դաստաւութիւնը ստորին դպրոցներում և վերականգնել բարձրագոյն դպրոցներում, կառավարչական և հասարակական հիմնարկութիւններում լեհական լեզուն—Լէդնեցկին ապացուցանում էր, որ Լեհաստանը ձգտում անջատվել Ռուսաստանից, իսկ Սամարինը խօսվիչ առաջարկում էր գնալ կառավարութեան եաևից, այն պայմանով, որ ընդհանուր ձայնատուութիւն լինի պետական Դումայի համար ընտրութիւնների ժամանակ, համաժողովը էր ժողովին հրաժարվել «սահմանադրական ժողով» տէրմինից, այլ անուանել ժողով «ներկայացուցչական», նոյնպէս խնդրել մանիֆեստի պատժի ոչնչացումը։ Իշխան Վօլկօնսկի Բեսարաբիայից զգուշացնում էր ժողովին չսպասել պահանջներ անելուց։ Հեռաօրը պահանջում էր, որ եթէ համաժողովի մեծամասնութիւնը կառավարութիւնը պաշտպանելու կարծիք յայտնէ, փոքրամասնութիւնը թող առանձին խումբ կազմէ և Վիտտէի մինիստրութեան կողմը կանգնէ։ Ներկայումս հարկաւոր են ոչ թէ քննադատներ, այլ Մինինների Դէպի խոհեմութիւն է հրաւիրում ժողովը Օրլօվի ազնուականութեան պարագլուխ Սամարինը, մանաւանդ է անում ֆինլանդացիների օրինակի վրա, որոնք, ստանալով սէյմ գումարելու խոստումը կառավարութիւնից, միացան դադարեցրին բէվօլիւցիան, սպասում են դումարման, հաւատում են։ Համաժողովը կամենում է կրկնել բիւրօկրատիայի ախորը միշտ չէր հաւատում հասարակական ոյժերին, իսկ այժմ հասարակական ոյժերից կամենում հաւատալ կառավարութեանը։ Խան Պավել Դօլգօրուկի առաջարկում է տեսակ բէզօլիւցիան. Վիտտէի մինիստրութիւն կարող է յոյս դնել աշակցութեան վրա, քանի որ կեանքի մէջ կը մտցնէ ազատ սահմանադրական-դէմօկրատիական կազմ, մանիֆեստի սկզբունքներով։ Մնացած բոլոր հեռաօրները զարգացնում են նոյն միտքը։

ՄՕՍԿՎԱ, 8 նոյեմբերի։ Կոմս Վիտտէին դարձած հեռագրի մէջ Մօսկվայի բօրսայի ընկերութեան ընտրեալները ասում են. «Կենսական Ռուսաստանի առևտրա-արդիւնաբերական դասակարգը, ի դէմս Մօսկվայի բօրսային ընկերութեան, իր պարտքն է համարում ասել ձեզ. Արիացէք, հաւատքէք գործի իր վախճանին մինչև որ կը կազմվի Պետական Դուման հոկտեմբերի 17-ի մանիֆեստ

—դրա մէջ է Ռուսաստանի փրկութիւնը։ Ներկայումս ամէն տեսակ փոփոխութիւններ անձերի և ուղղութիւնների կարող են անուղղելի վնաս բերել։ Ահռելիչ հաստատուն քայլերով ընթանալ գծագրված ճանապարհով կեանքի մէջ մտցնելու համար հոկտեմբերի 17-ին տեսած սկզբունքները։ Մայրաքաղ կուսակցութիւնները չը պէտք է շփոթին կառավարութեանը։ Սա ժողովուրդը դեռ ևս չէ կարողացել կազմել զօրեղ կուսակցութիւններ, որոնք չտապչին Ձեզ օգնութեան գալ։ Հաստատացէք, որ ներկայումս ռուս ժողովուրդը միայն Ձեր մէջն է տեսնում պետական այն գործիչին, որը կարող է երկիրը ազատ կազմի հասցնել»։

ՍՄՕԼԵՆՍԿ, 3 Նոյեմբերի։ Կայացաւ բոլոր վարչութիւնների բազմամարդ միտինգ իրանց անտեսական և քաղաքական իրաւունքների պաշտպանութեան ընդհանուր դաշնակցութեան կանոնագրութիւնը մշակելու համար։

ՅՈՒՐԻՅԻՆ։ Բօրսային կոմիտեսը որոշեց վատահութիւն յայտնել Վիտտէին և պատրաստակամութիւն ալիակցել կազմակերպվող կառավարութեանը, դրա մէջ տեսնելով ազգաբնակութեան խաղաղացման միակ միջոցը իրաւակարգի սկզբունքներով, իսկ մի ուրիշ հեռագրով կոմիտեսը հրաւիրում է քաղաքային և զէմստվային գործիչների համաժողովը համախմբվել Վիտտէի կառավարութեան շուրջը։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ, 8 Նոյեմբերի։ Առաջիկայ նահանգական զէմստվային ժողովը կը քննէ ընդհանուր տարրական կրթութեան հարցը։

ԿԱԶԱՆ, 8 Նոյեմբերի։ Երեք շաբաթվայ ընդմիջումից յետոյ, որ առաջացել էր գրաշարների գործադուլից, լոյս տեսան լրագիրները։

ԵԼԻՍԱՒԵՏԳՐԱԴ, 8 Նոյեմբերի։ Ներքին գործերի մինիստրը թոյլատրեց Ջարդից ձլտավածներին օգնող կոմիտեներին 15,000 ր. արկղային տուրքից։

ՏՕԿԻՕ, 8 Նոյեմբերի։ Պէկինի ռուսական և գերմանական դեսպանների բողոքի պատճառով բացառապէս Հոգևոր իմաստիկ տօրներ նշանակելու դէմ, նշանակված է ռուսական մի գնդապետ։

ԲԵՐԼԻՆ։ «Լոկալ Անցայգեր» լրագիրը, խօսելով Մօսկվայի զէմստվային գործիչների ժողովի մասին, նկատում է թէ դեռ յայտնի չէ թէ ինչ վճիռ կընդունէ ժողովը, բայց դատելով վիճաբանութիւններից, կարելի է կարծել թէ ժողովին մասնակցողները լաւ հասկանում են իրանց կայացնելի վճիռների նշանակութիւնը։ Պէտք է կարծել, որ ժողովը կը կարողանայ դլուխ բերել իր դժուար գործը։

ՓԱՐԻԶ։ Ֆրանսիական հասարակութեան մեծամասնութիւնը բոլոր քաղաքական գոյներից՝ կարծիք է յայտնում, որ անհրաժեշտ է պաշտպանութիւն տալ Վիտտէին ռուս հասարակութեան լայն խաւերի կողմից, տեսնելով այդ աշակցութեան մէջ անհրաժեշտ պայմանները երկրում խաղաղութիւն հաստատելու և բէֆօրմները իրականացնելու համար։ Մօսկվայի ժողովի սկզբունքի վճիռը այստեղ մեծ բաւականութեամբ ընդունվեց և օրօտային և քաղաքական շրջանների մէջ հանգրտութիւն առաջացրեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Новое Время»-ն հաղորդում է, որ Սենատը բացատրեց թէ քաղաքական յանցանքների համար քննութեան ենթարկվածները չեն զրկվում իրաւունքից մասնակցելու Պետական Դումայի ընտրութիւններին։ «Биржъ. Вѣд.» հաղորդում է խօսակցութիւն կօբէկօի հետ, ով յայտնեց թէ քաղաքական ընդհանուր գործադուլը մի նոր եքսցէս է, որ ուսս պրօլետարիատը դրեց հասարակային ասպարէզի վրա։ Գործադուլը կանգնեցնում է երկրի կեանքը, ամենքին դնում է ծայրայեղ դժուար դրութեան մէջ, սպառնալով սով և ջրի բացակայութիւն։ Պէտք է արդեօք այդ տեսակ գործադուլի պրօպագանդան, երբ կատարվում է մամուլի միջոցով, գաստառանի ենթարկել,—այդ հարցը քննելու համար այս օրերը կը հաւաքվի կօբէկօի յանձնաժողովը։

ԴՄԻՏՐՕՎՍԿ, Նոյեմբերի 3-ի մանիֆեստի լուրը արագ տարածվեց գաւառում։ Գիւղացիները մեծ ուրախութիւն են ցոյց տալիս։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, Վաղը ենթադրվում էր առաջնորդական հաշտութեան գաղնաժողի վաւերացումների փոխանակութիւնը. բայց որովհետև այդ առիթով լինելիք պատրաստութիւնները չեն վերջացած, ուստի փոխանակութիւնը յետաձգված է անորոշ ժամանակով։

ՏՕԿԻՕ։ Եպաղնական նաւատորմի վերակազմութեան հետ կապված է այն, որ Եպաղնական էսկադրան կը սկսէ երթևեկել Հարաւային Ծովերում մինչև Մինգապուր։ Տնտեսական պայմանների պատճառով զրահակիրները չեն կազմի եպաղնական նաւատորմի գլխաւոր ոյժը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հաղորդակցութեան նախարարների մինիստրը խնդրում է մինիստրների խորհրդից 20 միլիոն րուբլու կրեդիտ երկաթուղային ծառայողների կացութիւնը բարւոքելու համար։ Այդ գումարներով ենթադրվում է ամենից առաջ կազմակերպել բանուորական ժամերի կրճատումը երկաթուղային գծերի վրա, պարբերաբար ռոճիկների յաւելուածներ մտցնել, նորոգէս և ամրացնել այն կարգի ծառայողների ռոճիկը, որոնք նշանակված էին առաջուց։

ԼՕՆԴՕՆ։ «Տայմսը» գրում է թէ Պետերբուրգում և Լեհաստանում վերջին ընդհանուր գործադուլների կազմակերպողները բոլորովին չէին հաշուել իրանց ոյժերը։ Քան երևոյթին, ազգաբնակութեան մի ընդարձակ շերտը, դրա հետ և շատ բանուորներ, պատրաստ են այն պահակութեան, թէ ընդհանուր գործադուլները աւելի ծանր հետևանքներ են թողնում ազգաբնակների, քան թէ հարուստների վրա։ Ցանուն մարդկութեան և քաղաքակրթութեան պէտք է բոլոր ոյժերով ձգտել, որ ռուսաց յեղափոխական շարժման այս հանգրտութեան շրջանը գործածվի իրաւական բէֆօրմները ամրապնդելու համար։ Ռուսաստանի ճակատագիրը կախված է գիւղացիների դրութիւնից։ Զեմստվոի գործիչները կարող էին շատ բան անել անկարգութիւնների առաջն առնելու համար, ցոյց տալով կառավարութեան անհրաժեշտ աջակցութիւն։

ԲՆՐԼԻՆ։ «Նօյդ Դեօյչէ»-ի մէջ գետեղված է մի յօդուած սպառվող նոր պետական հարցերի մասին։ Յօդուածի մէջ հակորդված է թէ նոր կարիքները ծածկելու համար, որոնք պահանջում են մինչև 230 միլիոն, ենթադրվում է մտցնել հարկերի մի ամբողջ շարք, դրանց թւում բարձրացնել և գաբելրի հարկը, որ դանձարանին կը տայ 60 միլիոնից աւելի։

ՄՕՍԿՎԱ, 9 Նոյեմբերի։ Զեմստվոի համաժողովի բիւրօն քննութեան առաջարկեց հետևեալ բէզօլիւցիան, այն հարցի մասին, թէ ինչ դիրք պէտք է բռնէ համաժողովը կառավարութեան վերաբերմամբ—Համաժողովը որոշում է. համաժողովը իր հէնց առաջին որոշումների մէջ զրել էր նորն այն պահանջները, որոնց բաւարարութիւն տալը աւետված է մանիֆեստով։ Ողջունելով այս պետական ակտի երևան գալը՝ համաժողովը անհրաժեշտ է համարում, ի նկատ առնելով դրութեան ղժուարութիւնը և ներկայ րոպէի լրջութիւնը, որոշել իր յարաբերութիւնը դէպի մանիֆեստը մի քանգագին նուազում՝ համաժողովը արտայայտում է լիակատար համերաշխութիւն նրա հիմք կազմող սահմանադրական սկզբունքներին և նրան համարում է անհրաժեշտ պայման՝ երկրի և հասարակութեան ճշմարիտ խաղաղացման համար։ Այդ նուազումը կարող էր աւելի իրական լինել՝ եթէ կառավարութիւնը արտայայտէր հարկաւոր վճռականութիւն և հետևողականութիւն՝ մանիֆեստի սկզբունքները կեանքի մէջ մտցնելու ժամանակ։ Ներկայ հանգամանքներում մանիֆեստը կեանքի մէջ մտցնելը ընկնում է կառավարութեան պատասխանատուութեան վրա։ Համաժողովը իր կողմից արտայայտում է համոզմունք, որ կառավարութիւնը կարող է յոյս դնել զեմստվոի և քաղաքային գործիչների ընդարձակ խաւերի գործակցութեան և աջակցութեան վրա՝ որքան որ մինիստրութիւնը կեանքի մէջ կը մտցնէ մանիֆեստի սահմանադրական սկզբունքները. իսկ որ և է չեզոքութիւն այս սկզբունքներից կը հանդիպի վճռական ընդդիմադրութեան։ Միակ ճանապարհը ժողովրդական ներկայացուցչութեան և նրա վրա յենվող կառավարութեան հեղինակութիւնը պաշտպանելու և երկրի մէջ կարգ հաստատելու համար՝ համաժողովը համարում է այն, որ անմիջապէս հրատարակվի օրէնք, որով ժողովրդական ներկայացուցչութիւնը հրաւիրվի ընդհանուր, ուղիղ և գաղտնի քուէարկութեան միջոցով, ժողովրդական ներկայացուցիչների առաջին ժողովին օրէնսդրական դրվին սահմանադրական իրաւունքներ՝ Թագաւոր կայսրի հաստատութեամբ ռուսաց Կայսրութեան սահմանադրութիւնը մշակելու համար։ Բացի սրանից բանուորական օրէնսդրութեան մէջ պէտք է առաջարկվի սահմանել սկզբունքներ հողային բէֆօրմի մասին, և սրա համար ձեռք առնել միջոցներ։ Առանց սպասելու ժողովրդական ներկայացուցիչների գումարման՝ պէտք է ձեռք առնել անյետաձգելի միջոցներ»։ Բէզօլիւցիայի այս նախագիծն ընդունվեց բարձր և միաբան ծափահարութիւններով։ Բէզօլիւցիայի մասին խօսելու համար ձայն են խնդրել 40 հատ հոգի։

ՄՕՍԿՎԱ, 9 Նոյեմբերի։ Զեմստվոյի համաժողովը երեկոյեան նիստի ժամանակ քննում էր առաւօտեան բէզօլիւցիան։ 27 հաստատուների առաջարկած բարեփոխումները բիւրօն կը քննէ և վաղը առաւօտ քուէարկութեան կը ներկայացնէ բարեփոխված բէզօլիւցիա։ Ստացված են բաղմաթիւ ողջոյնի հեռագիրներ զանազան տեղերից՝ հասարակական կազմակերպութիւններից, ուպրաւներից և առանձին խմբերից, որոնք յօդուտ կառավարութեանը աջակցելու են հակառակ սահմանադիր ժողովի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Նոյեմբերի։ Պաշտօնական։ Հաստատված պահպանութեան դրութեան մէջ են յայտարարված—Կօբօի, Ձերնիգովի, Տամբօվի, Կուրսկի, Պենզայի նահանգները. Բալաշովի, Սերդօբի, Պետրօվսկի, Ատկուբսկի, Սարատովի պատառները և Սարատով քաղաքը։

Կոմս Վիտտէն հեռագրով հաւատացուցներ է ստացել, որ իրան կօժանդակեն հոկտեմբերի 17-ի մանիֆէստի հիմունքները իրականացնելու։ Հեռագրել են Սամարայի և Րիբինսկի բօրսաների կոմիտէտները, Կազանի և Աստրախանի քաղաքային դումաները և բոլոր դաստակարգերից ու բոլոր ազգերից Պետական Դումայի համար պատգամաւոր ընտրելու իրաւունք վայելողները։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ՅՈՍԱՓԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Այսօր, ուրբաթ, Նոյեմբերի 11-ին
կը ներկայացվի

ՏՐԱՎԻԱՏԱ

օպերա 4 գործ. երաժ. Վերդիի, Թարդ. Դուսխէլի։

Մասնակցում են տ.տ. Գաշինսկայա, Կարպովա, Զասլավսկայա, պ.պ. Կօլօսով, Եւլախով, Տօմաշևիչ, Վօլսկի, Դմիտրենկօ, Փիլիպով, Շէլին։

Գարերը կը գնէ բալէտմէյստր պ. Բեկեֆի
Սկիզբը 8 ժամին

Շաբաթ, Նոյեմբերի 12-ին, սովորական գնեղով կը ներկայացվի «ՉԱՉԱ» օպերա 4 գործ. երաժ. Լէօնկովալօի, թարգմ. Գօրչակովային։

Գտարտաստում են ներկայացնելու ՉԵՐՆՎԻՋՆԻ օպերա 4 գործ. երաժ. Զայկովսկու, «ՀԷՅՇԱ» օպերետա Բիդնէյ Ջօնսի, «ՓԻԳԱՐՕԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ», Մօցարտի։

Տօմսակները ծախվում են։

ՀՐԱՒԻՐԷ

Կիրակի, ամսոյս 13-ին, կատարվելու է Թանդոյեան օրիորդաց դպրոցի վերաբացման հանդէսը, ուստի դպրոցի վարչութիւնը հրաւիրում է յարգելի ծնողներին, աշակերտուհիների ծնողներին և բոլոր ցանկացողներին պատուել իրանց ներկայութեամբ յիշեալ հանդէսը։

ՆՈՐԱՇԷՆԻ ս. Աստուածածին եկեղեցու համար կազմվում է երևան քառաձայն

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Ցանկացողները, պարապմունքներից յետ չը մնալու համար, թող շտապեն դիմել խմբապետ պ. Մանուկեանին նոյն եկեղեցու դպրոցում, ամեն օր, երեկոյեան ժամը 5—6. խումբը տալու է նաև համերգներ։ 1—1

ԲԺԻՇԿ

Ս. ՄԻՐՋՈՅԵԱՆ

Մանաղէա Աչքի հիւանդութիւնների, վերակազեց հիւանդների ընդունելութիւնը։ Առաւօտեան 1—3 ժամը. երեկոյեան 5—6 ժամը։ Սօլօլակսկայա փող. սեփ. տ.։ 21—25

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիսի, միզային, վէներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկեվիչա փողոց № 33/15 տ. Միքիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 15—100

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանէջանեան

Մանաղէա միզային, վէներական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կազեոսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազեոսկի փողոցից № 2.
(ա. օ.) 53—300

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատոր Մօսկվայի հասարակաց կլինիկայի

Վերակաց ընդունելութիւնը յատկապէս մանգաքաոհական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բարիշևսկի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլեֆօն № 11.
(ա. օ.) 19—20

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ

Բժիշկ Միխայել Գեղեվանօվի

Զգային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը
Կօրպանօվսկայա փող. № 20 վերայում։ Սեփական տ., տէլեֆօն № 791։ (ա. օ.) 26—150

ՀԱՅԵՐԷՆԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(լեզու և գրականութիւն)

Նոյեմբերի 15-ին բացւում են Թիֆլիսում հայերէնի կուրսեր։ Պարապմունքների ծրագիրը հետևեալն է։

ա) Գործնական զբաղումներ—1) բանաւոր աշխատանք՝ ընթերցում հայ հեղինակների և գրական երկերի լեզուի, ոճի, մտքի ու ոգու վերլուծութիւն. 2. գրաւոր աշխատանք՝ մտքերի արտայայտութեան վարժութիւն, ոճ ու շարադրութիւն.

բ) Լեզուի տեսական դասընթաց—1) աչխարհաբարի հիմնական օրէնքները, 2) գրաբարի և աշխարհաբարի քերականական և բառական կապը, 3) լեզուագիտական ընդհանուր ծանօթութիւն, 4) հայերէնի ծագումն ու զարգացումը.

գ) Գրականութեան պատմութիւն—1) ընդհանուր ծանօթութիւն հին հայ գրականութեան, 2) արևելեան հայ գրականութիւն, 3) ամփոփ տեղեկութիւն արևմտեան հայ գրականութեան.

Կուրսերը կը տևեն երկու կիսամեակ. Նոյեմբերի 15-ից մինչև փետր. 20-ը և փետր. 20-ից մինչև յունիսի 1-ը։ Մասնակցողները կը բաժանուեն խմբերի իրանց պատրաստութեան և յարմարութեան համեմատ։ Խմբերը կը լինեն 10-15 հոգուց բաղկացած։ Ամեն մի խումբ կունենայ շաբաթական 3 օր աշխատանք, ամեն անգամ 2 դաս, դասը 45 րոպէ։

Վճարը՝ 30 ռուբլի կիսամեակը։ Փոքրաթիւ խմբերի համար պայմաններն առանձին։ Տեղի մասին կը յայտարարուի յետոյ, երբ կը որոշուի մասնակցողների թիւը։ Դիմել՝ Յակոբ Մանանդեանին, Вознесенская 24։ Վարիչ կուրսերի՝ Յ. Մանանդեան։ 2—2

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը

մտադիր է մօտ ժամանակներումս արտակարգ ժողովի հրաւիրել ընկ. մեծարգոյ անդամներին քննելու հետևեալ առաջարկելիք հարցերը։ 1. ընկերութեան նախկին 1881 թ. կանոնադրութեան վերականգնելը։ 2. որբանոցի հրահանգի փոփոխութեան և որբանոցի տեղափոխութեան հարցերը։ 3. Վարչութեան անդամների թէև աւելացնելու հարցը։ 4. Ճաշարանի հրահանգի և 6) անշարժ կալուածքների շահագործելու եղանակի մասին առաջարկութիւններ։

Վարչութիւնը յայտարարելով վերոյիշեալ առաջարկելիք հարցերի մասին, խնդրում ընկերութեան մեծարգոյ անդամներից ովքեր ունեն նոր հարցեր ընդհանուր ժողովին առաջարկելու, թող վաղօրօք բարեհաճեն ուղարկել վարչութեան, որպէս զի հնարաւոր լինի զետեղել ընդհանուր ժողովին առաջարկելիք հարցերի շարքում։ 2—2

Տպարան «ՀԵՐՄԻՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. Ул. № 15.